

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽԳՈՐԾՈՒՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ)  
ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Այսօր դպրոցական կրթության «որակը» սահմանվում է այն տեսանկյունից, թե «ի՞նչ ենք սովորեցնում», «ինչպե՞ս ենք սովորեցնում», «ու՞մ ենք սովորեցնում», «ի՞նչ է մնում մեր սովորեցրածից»: Դպրոցի արդյունավետության այս հայեցակարգը ենթադրում է նաև գիտելիքներ դպրոցի գործունեության ողջ շրջանակի մասին, փոփոխվող հանգամանքներին արձագանքելու կարողություն, ուսումնական գործընթացի մասնակիցների բավարարվածություն և պարտավորություններ:

Դպրոցի արդյունավետությանը նպաստող գործոններից մասնագիտական գրականության մեջ ամենից հաճախ նշվում են հետևյալները. դպրոցի միասնական հայեցակարգը, մասնակցություն դպրոցում որոշումների կայացմանը, դպրոցում ստեղծված դրական միջավայրը, դպրոցի տնօրենի՝ որպես աջակցի դերը, ուսուցչի՝ որպես ներդրողի դերը, աշակերտի՝ որպես մասնակցի դերը, ինտերակտիվ (փոխգործուն, փոխազդող) փոխհարաբերություններ:

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներն «աշխատում են» միայն ճիշտ մտածված ու կազմակերպված համագործակցության դեպքում: Մասնագիտական մանկավարժական հաղորդակցումը ուսուցչի և աշակերտի փոխգործուն մի համակարգ է, որի նպատակն է տեղեկատվության փոխանակումը, ամհատի ճանաչումը և դաստիարակչական ազդեցության կազմակերպումը: Ըստ այդմ էլ տարբերակվում են հաղորդակցման երեք հիմնական գործառույթներ՝ *հաղորդակցական* (կոմունիկատիվ), որը ենթադրում է տեղեկությունների փոխանակում, *ընկալման* (պերցեպտիվ), որը ենթադրում է փոխադարձ ճանաչում, *փոխգործուն* (ինտերակտիվ), որը ենթադրում է համատեղ գործունեության կազմակերպում և իրականացում:

Հաղորդակցումը ուսուցման ընթացքում ենթադրում է ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ փոխգործունություն, որի նպատակն է ստեղծել բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, ինչը խթանում է անձի լիարժեք զարգացումը:<sup>1</sup>

Ընկերների հետ փոխադարձորեն շփվելը, նրանց հետ ինչ-որ միտք կիսելը կարգապահական վարքագիծ է: Մեծիկան պատկերացումները, մտքերն ու կարծիքներն ուրիշներին հաղորդելը բավական համարձակ քայլ է: Աշակերտը ստիպված է բացեիքաց ցուցադրել ուրիշներին, թե ինքն ինչպիսի մտածողության և ինչ պատկերացումների տեր է: Դասարանում ընկերների հետ մտքեր կիսելը ենթադրում է, որ աշակերտը պետք է կարողանա լսել, կասեցնել իր դատողությունները կամ խոսակցությունը սեփական ձևով տանելու ներքին պահանջը: Որպես փոխհատուցում նրանք ստանում են ուրիշների կարծիքը, ընդլայնված համատեքստը, ուր նրանք կարող են տեղադրել սեփական մտքերը և դրանք հարմարեցնել պատկերացումների այն կտավի մեջ, որ հետըզհետե ստեղծվում է ուսման և կենսափորձի միջոցով: Մյուս կողմից էլ աշակերտները, սեփական արժեքի ու արժանապատվության վստահություն չունենալու դեպքում, չեն համարձակվի իրենց մտքերն արտահայտել: Իսկ եթե նրանք տեսնում են, որ իրենց մտքերը կարևորվում են, ուսուցիչն իսկապես հարգում ու գնահատում է իրենց մտքերն ու պատկերացումները, նրանք շատ ավելի մեծ պատասխանատվությամբ և զգուշությամբ են մոտենում սեփական մտքի արդյունքին:

Տարրական դասարանների մայրենի լեզվի ուսումնական նյութի<sup>2</sup> կայուն յուրացումը մեծապես պայմանավորված է ուսուցման նոր մեթոդների ներդրման արդյունավետությամբ: Վերջին տարիներին ուսուցման գործընթաց են քափանցում ուսուցման ինտերակտիվ մեթոդներ: Դրանք մեծապես նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացի հետաքրքիր և աշխույժ դարձնելու պայմանների ստեղծմանը:

<sup>1</sup> Մեմինար պարապմունքների ուղեցույց, ԱՅՐԵԶՍ, Եր., 2002:

<sup>2</sup> Ջ. Գ. յ ու լ ա մ մ ի ղ յ ա ն ,Կ. Թ ո ղ ո ս յ ա ն , Ա. Մ ա ն ո լ կ յ ա ն , Երկրորդ դասարան, Մայրենի, Եր., 1997:

Աշակերտներն այդ դեպքում պասիվ ընկալողից վերաճում են հայտնագործողի և գիտելիքների ստացման գործընթացի ակտիվ մասնակցի: Եթե փոխգործուն մեթոդները խարսխվում են ուսուցման և դաստիարակության ավանդական մեթոդներին, սրանք դառնում են ավելի ճկուն, ապահովում ուսուցման և համագործակցության սկզբունքի արդյունավետությունը:

**Ավանդական և փոխգործուն ուսուցման տարբերությունները<sup>3</sup>**

Ավանդական խմբեր	Փոխգործուն խմբեր
Միասեռ խմբավորում	Տարասեռ խմբավորում
Պատասխանատվություն միայն սեփական անձի համար	Պատասխանատվություն խմբի և սեփական անձի համար
Ուսուցչի կողմից չնչին վերահսկողություն	Ուսուցչի կողմից մշտական վերահսկողություն
Մեկ առաջնորդ	Առաջնորդության հաջորդական ստանձնում
Առանձնահատուկ դերի բացակայություն	Դերերի բաշխում
Նպատակների ոչ հաճախ հստակեցում	Նպատակների հստակ սահմանում
Փոխգործուն հմտությունները ենթադրվում են	Փոխգործուն հմտություններն անմիջականորեն ուսուցանվում են
Խմբերի նվաճումների կամ թերացումների վերլուծության բացակայություն	Ավանդակի և փոխգործուն հմտությունների մշակում
Խմբի մեծությունը հազվադեպ է նկատի առնվում	Խումբն ունի 3 - 5 անդամ
Շեշտը դրվում է արդյունքի վրա	Շեշտը դրվում է գործընթացի և արդյունքի վրա

Համառոտակի ներկայացնենք փոխգործուն մեթոդի գործադրման քայլերը.<sup>4</sup> Ուսուցչին առաջադրում է քննարկվող հարցը: Նա ոչ թե ուսումնական նյութ է հաղորդում, այլ մեկնաբանում է հարցադրումը: Յուրաքանչյուր աշակերտ իր իմացածն է ներկայացնում առաջադրված հարցի վերաբերյալ:

ա. Ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել:

բ. Դիմացիների կարծիքը չի մերժվելու ոչ մեկի կողմից:

գ. Ցանկացած կարծիք խրախուսվում է:

Ստեղծվում է ուսումնական նյութի արկղիկ՝ բոլոր առաջարկությունների ընդգրկմամբ: Դասարանի աշակերտներով (թիմով) ստեղծում են ուսումնական նյութը: Աշակերտներից յուրաքանչյուրին տրվում է ուսումնական նյութի նախապես կազմված տեքստի կրկնօրինակը: Ստացված օրինակների վրա աշակերտները նախապես պայմանավորված ձևով նշումներ են անում: Ուսուցչին ընդհանրացնում է աշխատանքը:

Փոխգործուն մեթոդի կիրառումն ուսուցչիչներին հնարավորություն է տալիս. ակտիվացնել աշակերտների մտածողությունը, հետաքրքիր քննարկումներ ծավալել, աշակերտներին ակտիվորեն ներգրավել ուսման գործընթացի մեջ, նպաստել դրական փոփոխությունների ձևավորմանը, աշակերտներին հնարավորություն տալ ծանոթանալու տարբեր կարծիքների հետ, խրախուսել աշակերտների ինքնարտահայտումը, ապահովել տեղեկատվության մշակումը:

Քանի որ իմաստավորման կարողությունը դիտվում է որպես ընթերցողի կոնկրետ տեքստի և ընթերցանության համատեքստի միջև տեղի ունեցող բարդ փոխազդեցություն, արդյունավետ ընթերցողները կիրառում են այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի իմաստալից խուսանավել այս փոխազդեցությունների մեջ: Ընթերցողի կողմից ընտրված մեթոդները կախված են այն բանից, թե ինչ է մտածում նա ընտրված նյութի մասին, որքանով է այն ծանոթ իրեն և թե ինչպիսի ռազմավարություններ կիրառելու փորձ ունի:

<sup>3</sup> Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն, Չեռնարկ ուսուցչիչների համար, ԱՅՐԵՔՍ, Եր., 2002:

<sup>4</sup> «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը կրտսեր դպրոցում» և «Ըննադատական մտածողության զարգացումը կրտսեր դպրոցում», Ծրագրեր և նյութեր, Եր., 2002:

Ներկայացնենք երեք սկզբունքներ, որոնք ընթերցանությունը բնութագրում են որպես ընթերցողի, տեքստի և բովանդակության միջև տեղի ունեցող փոխազդեցության հետևանք: Այս սկզբունքները կնպաստեն տպագրված նյութից արդյունավետորեն սովորել կարողացող աշակերտների ձևավորմանը:<sup>5</sup>

1. Աշակերտներն ավելի արդյունավետ սովորում են այն ժամանակ, երբ թեմայի մասին որոշակի նախնական գիտելիքներ են ունենում: Եթե ուսուցիչն օգնի աշակերտներին պատկերացնել այն գաղափարներն ու հասկացությունները, որոնց մասին կարդալու են, ընթերցանությունն ավելի հետաքրքիր կլինի: Ուսուցիչը կարող է պարզել աշակերտների գիտելիքները թեմայի մասին՝ անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով այն աշակերտների համար, ովքեր ոչ բավարար գիտելիքներով են սկսում ընթերցանությունը: Կարելի է նաև աշակերտների ուշադրությունը հրավիրել առանցքային բաների վրա և շարժել նրանց հետաքրքրությունը:

2. Աշակերտներին բովանդակության պասիվ ընկալողներից գաղափարների ակտիվ կառուցողներ դարձնելը նախ և առաջ նշանակում է հետևել, որ աշակերտները ոչ թե սոսկ կարդան նյութը, այլև կիրառեն կարդացածը: Դասարանում կարդացածի մասին ակտիվ քննարկումները հանգեցնում են նրան, որ աշակերտներն ավելի խորությամբ են փորձում ըմբռնել տպագրված տեքստի իմաստը:

Այն գործողությունները, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին փոխազդել միմյանց վրա, կարող են ավելացնել թե սովորելու շարժառիթները, թե դրանց արդյունքում նրանց ակտիվ ներգրավվածությունը:

3. Աշակերտներն այն ժամանակ են լավ սովորում, երբ դառնում են ակտիվ ու գործնական ընթերցողներ: Ուսուցչի նպատակն է, որ աշակերտներն ուսումնառության հարցում հաղթահարեն կախվածությունը ուսուցչից և դառնան ավելի ինքնուրույն: Դասարանում կիրառվող այն հմարները, որոնք օգնում են աշակերտներին գնահատել սեփական ուսումնառությունը, գործի դնել անձնական նպատակները, ընտրել ամենաարդյունավետ գործողությունները և գնահատել իրենց հաջողությունները, նպաստում են ավելի ինքնուրույն և ինքնավստահ անհատների ձևավորմանը, որոնք ընդունակ են սովորել ողջ կյանքի ընթացքում:

*Փոխգործուն ընթերցանության ուղեցույց.*<sup>6</sup> Սա հիանալի ռազմավարություն է, որն օգնում է աշակերտներին տեքստային նյութերի ընթերցանությունն ավելի արդյունավետ դարձնել: Այն ուսումնասիրության ուղեցույցների տարբերակներից մեկն է, որն ընթերցվող նյութում գլխավոր, էական գաղափարները պարզելու նպատակով աշակերտներին ներգրավում է ընկերների փոքր խմբով աշխատանքի մեջ:

Նշենք կարևորվող մի քանի քայլեր:

1. Աշակերտներին ներկայացնենք տեքստը՝ պարզելու այն կարևոր տեղեկությունները, որոնք կարող են խոչընդոտել գաղափարի ըմբռնմանը: Ուշադրություն ենք դարձնում նաև տեքստի աչքի ընկնող առանձնահատկություններին, որոնք կարող են վրիպել նրանց աչքից: Օրինակ՝ նկարներ, գծագրեր, աղյուսակներ:

2. Կազմում ենք աշակերտների համար փոխգործուն ուղեցույց՝ զույգերով կամ խմբով լրացնելու համար: Օգնում ենք կողմնորոշվել, թե կարդալու ընթացքում ինչի վրա կենտրոնացնեն ուշադրությունը և յուրացնեն նյութի խրթին թվացող հատվածները: Առաջադրում ենք այնպիսի հարցեր, որոնք կդրդեն աշակերտներին ավելի հանգամանորեն մտածել նյութի մասին, իմաստային կապեր հաստատել և եզրակացություններ անել: Սա նաև կօգնի աշակերտներին խնդիրները համագործակցությամբ լուծելու փորձ անել՝ համոզվելու, որ գտել են ճիշտ պատասխանները:

3. Ընթերցանության համար նախատեսված նյութը բաժանում ենք երեք մասի: Մի մասը աշակերտներից մեկը բարձրաձայն ընթերցում է ողջ խմբի համար, երկրորդ մասը յուրաքանչյուրը լուռ ընթերցում է, երրորդ մասը կարելի է աչքի անցկացնել: Ուղեցույցն օգտագործում ենք լրացուցիչ նախնական տեղեկություն ապահովելու համար

<sup>5</sup> Ջ. Մ Ք ի Լ, Զ. Մ ե ռ ե ղ ի թ, Չ. Թ ե մ փ Լ, Զննադատական մտածողության համակարգը ուսումնական ծրագրի ողջ համատեքստում (ուղեցույց 1, 11, 111, 1 V):

<sup>6</sup> Դոկտոր Մարի Վեսթբրուք – Թախունց, Տարրական դասարանների ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, ԱՅՐԵԶՍ, Վաշինգտոն, 1999:

կամ խրախուսում ենք աշակերտներին մտազորոհի միջոցով բացահայտելու այն, ինչ արդեն գիտեն տվյալ թեմայի մասին:

4. Յուրաքանչյուր խմբին հանձնարարում ենք իրենց արդեն լրացված ուղեցույցները՝ որպես ուրվագիծ օգտագործելու, ամբողջ դասարանին իրենց քննարկման արդյունքներին հաղորդակից դարձնելու համար:

Առավելություններն են. Աշակերտներն ուշադիր լսում են տեղեկությունների մի մասը, ավելի ուշադիր կարդում մեկ ուրիշ հատվածը, մեկ այլ մաս թուցիկ աչքի են անցկացնում: Աշակերտներն իրենց գործընկերների հետ պարզում են տեքստի՝ իրենց անհասկանալի մասերը կամ քննարկում նյութը: Փոխգործուն ընթերցանության ուղեցույցի մեթոդն առավել արդյունավետ է լինում ընթերցանության դժվարություններ ունեցող աշակերտների համար:

Փոխգործուն մեթոդի անհրաժեշտությունն ակնառու է խմբային աշխատանքի մեթոդի կիրառման ժամանակ: Այն աշխատանքային մի ձև է, որն ուսուցումը դարձնում է հայտնագործություններ կատարելու գործընթաց: Խմբի բոլոր աշակերտները պատասխանատու են աշխատանքի իրենց բաժինը կատարելու և նյութը յուրացնելու համար: Անհատապես հաշվետու լինելն սկսվում է, երբ յուրաքանչյուրի կատարած աշխատանքը գնահատվում է, և խումբը տեղյակ է լինում այդ մասին, որպեսզի պարզ լինի՝ ով լրացուցիչ օգնության կարիք ունի իր աշխատանքի ընթացքում: Թիմի անդամներն ընթրնում են, որ իրենք միմյանց հետ կապված են այնպես, որ թիմը չի կարող հաջողության հասնել, եթե յուրաքանչյուրն իր հերթին հաջողություն չունենա: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել և կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում, խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց կատարած աշխատանքին, հարցեր են տալիս, ստուգում ընթրնումը, կապ են ստեղծում մախորդ և նոր գիտելիքների միջև, քննարկում են կատարած եզրահանգումները, ոգևորում և սովորեցնում են միմյանց: Բացի ակադեմիական հմտություններ հաղորդելուց, աշակերտներին օգնում և քաջալերում են յուրացնել և զարգացնել հասարակական այնպիսի կարևոր ունակություններ, ինչպիսիք են վստահության զգացումը, լիդերությունը, որոշումներ կայացնելու, հաղորդակցության, կոնֆլիկտի կառավարման կարողությունները: Հետազոտությունները ցույց են տալիս, որ փոխգործուն մեթոդներով սովորած աշակերտները դրսևորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խոր ընկալում, սթրեսի և տագնապի ավելի ցածր մակարդակ, սովորելու և հաջողության հասնելու ուժեղ մղում, իրավիճակն ուրիշների տեսանկյունից դիտարկելու նոր ունակություն, ընկերների հետ ընկերական և աջակցային հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին:

Խմբային աշխատանքի գնահատումը<sup>7</sup>

1. Ի՞նչ կարծիք ունեք խմբի աշխատանքին ձեր բերած ավանդի մասին:
2. Ըստ ձեզ՝ որո՞նք են ձեր ուժեղ կողմերը:
3. Հաջորդ անգամ ինչպե՞ս կարող եք բարելավել ձեր աշխատանքներն ու հմտությունները:
4. Առաջադրանքի համատեղ կատարման ի՞նչ առավելություններ կնշեք:
5. Ի՞նչ եք սովորել մյուսների հետ համատեղ աշխատանքից, որ չէիք սովորի համատեղ աշխատելիս:
6. Համատեղ աշխատանքի ընթացքում ի՞նչ փոխզիջումներ եք արել:
7. Համատեղ աշխատանքն ինչպե՞ս է փոխել ձեր մտածելակերպը:

Ուսուցումը փաստերի և գիտելիքների պարզ մտապահումից և վերարտադրումից վերափոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության: Հավաքելով տվյալները, վերլուծելով ուսումնական խնդիրը, ընդունելով այլընտրանքային տեսակետները և օգտագործելով խմբային քննարկման ընթացքում հնչած տեսակետները՝ աշակերտները փնտրում և գտնում են իրենց հուզող հարցերի պատասխանները: Ուսուցչի և աշակերտների ճիշտ ու նպատակային կազմակերպված հարցադրումներն

<sup>7</sup> Դոկտոր Մարի Վեսթբորո - Թախունց, Տարրական (Մ - 3) ուսուցման և ուսուցիչների վերապատրաստման կատարելագործում, 1998 - 2000:

անմիջականորեն նպաստում են խոսքի և մտքի զարգացմանը: Այս տեսակետից շատ օգտակար է հարցադրումներով ուղղորդված ընթերցանության դասի կազմակերպումը, որը երեք փուլից բաղկացած գործընթաց է:<sup>8</sup>

*I փուլ – Մինչ քեմայի ընթերցանությանն անցնելը աշակերտներին առաջարկում ենք վերհիշել իրենց հետ կատարված մի դեպք (նոր նյութի հետ կապված):* Դրա նպատակն է շահագրգռել, ակտիվացնել նրանց մասնակցությունը դասին, բացահայտել կապեր դասի և իրական կյանքի միջև: Այն հող է նախապատրաստում կարդացածն ավելի լավ ընկալելու համար:


*II փուլ – Նյութի հաղորդում կամ իմաստի ընկալում:* Դասի հաղորդումն անցկացվում է կանգառներով: Յուրաքանչյուր կանգառից հետո հարցեր է առաջադրվում, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին ճիշտ պատկերացնել և վերարտադրել ոչ միայն հետաքննելի, այլև հենց իրենց հույզերն ու ապրումները: Հարցադրումները նպատակ են հետապնդում նաև ուշադրությունը բևեռել այն կարևոր բաղադրամասերին, որոնց միջոցով աշակերտներն առավել շահագրգռվում են ներգրավվում ընթերցանության մեջ և կանխատեսումներ անում («Կարո՞ղ եք կանխագուշակել, թե ինչպես է ավարտվելու պատմվածքը»): Հարցերը պետք է տրվեն այնպես, որ էական նշանակություն ունենան պատմվածքի խորքն ընկալելու և կշռադատման ամենատարբեր ոլորտները թափանցելու առումով: Մեկնողական և վերլուծական հարցադրումների միջոցով հնարավոր է օգնել աշակերտներին նյութն ավելի համակարգված տեսնելու, թափանցելու տեքստի բովանդակային խորքը և արդյունավետ քննադատական վերլուծության հասնելու: Նրանք կարողանում են բացահայտել հարաբերությունները, ձևավորել պատկերացումները: Աշակերտները սեփական մտքերն արտահայտում են անկաշկանդ, լսում ուրիշի կարծիքը, ակտիվանում ու աշխուժանում են պասիվ աշակերտները:

*III փուլ – Ամփոփում կամ կշռադատում:* Գրավոր աշխատանքի կամ նկարելու միջոցով աշակերտներն ամփոփում են ուսումնասիրվող քեմայի վերաբերյալ իրենց մտքերը, ընկալումներն ու պատկերացումները: Ուսուցչի համար տեսանելի է դառնում աշակերտների կողմից նյութի ընկալման աստիճանը:

Ներկայացնենք փոխազդեցություն (ինտերակտիվ) այլ մեթոդներ:

**Վեների դիագրամ.** Վեների դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը բացահայտելու նպատակով: Ենթադրենք, թե աշակերտները համեմատում են Դավթին և Մելիքին: Վեների դիագրամը դասարանին հնարավորություն կտա հակադրել այս երկուսին՝ հատվող գծերով միաժամանակ ցույց տալով նրանց ընդհանրությունները: Ուսուցիչը աշակերտական զույգերին առաջարկում է գծել Վեների դիագրամ՝ լրացնելով միայն շրջանագծերի երկու մասերը, որոնցից մեկն նվիրված է Դավթին, մյուսը՝ Մելիքին:

Հետո զույգերը կարող են միմյանալ այլ զույգերի հետ և չորս հոգանոց խմբերով համեմատել դիագրամները, այնուհետև հատվող մասում նշել այն բոլոր հատկանիշները, որոնք երկուսի համար էլ ընդհանուր են: Այս մեթոդը կարելի է օգտագործել ամփոփման փուլում, իսկ եթե նյութը ծանոթ է, նաև՝ նախապատրաստական փուլում:



**Խառնված հերթականություններ.**<sup>9</sup> Ամբողջ խմբի հետ փոխազդեցություն եղանակով աշխատելու նպատակով ուսուցիչը կարող է իրադարձությունների խմբից հինգ կամ վեց իրադարձություն գրառել առանձին թղթերի վրա: Թղթերը խառնում են և դնում գրատախտակի ներքևում: Դասարանին առաջարկվում է որոշել ճիշտ հերթականությունը: Աշակերտները մեկ-մեկ մոտենում են և թղթերից մեկը դնում են իրենց համապատասխան տեղում: Երբ բոլորը համաձայնության են գալիս, ուսուցիչը հանձնարարում է ընթերցելիս ուշադիր զննել տեքստն ու տեսնել, թե արդյո՞ք իրենց դասավորու-

<sup>8</sup> «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը կրտսեր դպրոցում» և «Բննադատական մտածողության զարգացումը կրտսեր դպրոցում», Ծրագրեր և նյութեր, Եր., 2002:  
<sup>9</sup> Գիտամեթոդական հանդես՝ «Նախաշալիդ» (2001/2002):

թյունը համապատասխանում է տեքստի տարրերի դասավորությանը: Այս մեթոդը կարելի է օգտագործել բոլոր փուլերում:

**Խորանարդում.**<sup>10</sup> Այս մեթոդն օգնում է առաջադրված հարցը դիտել տարբեր տեսանկյուններից: Պետք է սովորաբար պատրաստել խորանարդ (15 – 20 սմ կողի երկարությամբ) և վեց նիստերից յուրաքանչյուրի վրա գրել հետևյալ առաջադրանքներից որևէ մեկը՝ «Ինչպիսի՞ տեսք ունի այն», «Այն ինչի՞ է մման և ինչի՞ց է տարբեր», «Ինչի՞ մասին է այն ստիպում քեզ մտածել», «Ինչի՞ց է բաղկացած (պատրաստված) այն», «Ինչպե՞ս կարող ես օգտագործել այն», «Այն լա՞վն է, թե՞ վատը»: Կախված ուսուցանվող թեմայից՝ կարող են օգտագործվել ոչ բոլոր նիստերը: Ուսումնասիրվող թեման պետք է ծանոթ լինի աշակերտներին (կերպարներ, բնության երևույթ, առարկայի նկարագիր և այլն):

Մեթոդն սկսում ենք՝ ներկայացնելով ուսումնասիրվող առարկան կամ հասկացությունը: Առաջարկում ենք մտածել դրա մասին և նկարագրել, համեմատել, գուգորդել (գույնը, ձևը, նշանները և այլն), որի համար ժամանակ ենք տրամադրում: Վերջացնելուց հետո աշակերտներին առաջարկում ենք միմյանց ներկայացնել իրենց գրածը: Խորանարդումը կիրառելի է և նախապատրաստական, և ամփոփման փուլերում:

**Փոխգործում ընթերցանություն.** Աշակերտները բաժանվում են թիմերի: Յուրաքանչյուր թիմի ներսում պետք է լինեն ընթերցանության տարբեր մակարդակներ ունեցող աշակերտների զույգեր: Աշակերտները կատարում են մի շարք աշխատանքներ միմյանց համար՝ ընթերցելը, պատմության մասին կռահումներ անելը, պատմվածքը մեկը մյուսի համար ամփոփելը, ուղղագրական, բացատրական վարժություններ կատարելը և այլն:

**Փոխադարձ ուսուցում.** Բոլորին հայտնի է, որ սովորեցնելը սովորելու լավագույն եղանակն է: Հարցադրումների օրինակով փոխադարձ ուսուցումը մշակվել է աշակերտներին ուսուցչի դերի ստանձնման հնարավորություն տալու և մյուսների ընթերցանությունը ղեկավարելու նպատակով: Փոխադարձ ուսուցումը կատարվում է չորսից յոթ հոգուց բաղկացած խմբերում: Բոլորին բաժանվում է տեքստը, և աշակերտները հերթով հանդես են գալիս իբրև ուսուցիչ: Երբ աշակերտները մտովի ավարտում են առանձին պարբերության ընթերցումը, ուսուցչի դերը ստանձնած աշակերտը

1. ամփոփում է ընթերցած հատվածը,
2. երկու կամ երեք հարց է կազմում պարբերության վերաբերյալ աշակերտներից ստանում դրանց պատասխանները,
3. պարզաբանում է այն խնդիրները, որոնք աշակերտների համար պարզ չեն,
4. կանխագուշակում է, թե ինչի մասին է տեքստի հաջորդ պարբերությունը,
5. բոլորին հանձնարարում է լուռ կարդալ տեքստի հաջորդ պարբերությունը:

Լավ կլինի, որ առաջին պարբերության քննարկումը վարի ուսուցիչը, իսկ աշակերտներն ուշադիր զննեն, թե ուսուցիչն ինչպես է վարում դասը, որ իմանան վարման կարգը: Նշված հինգ քայլերը գրում են գրատախտակին և առաջնորդվում դրանցով:

**Մտածիր - գուգորդիր - մտքեր փոխանակիր.** Մա արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որն աշակերտներին առաջարկում է կշռադատել տեքստի շուրջ և փոխգործումն մեթոդով գործընկերների օգնությամբ ձևավորել իրենց մտքերը: Ուսուցիչը նախօրոք հարցեր է պատրաստում, որոնք ենթադրում են երկակի պատասխան և առանձին աշակերտների առաջարկում է գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է երկուսի գաղափարները: Վերջում ուսուցիչը հարցնում է այնքան թվով զույգերի, որքան թույլ է տալիս ժամանակը, սպա քննարկում են արդյունքները:

**Քննարկումների ուղղորդման միջոցներ.** Ակնհայտ տարբերություն կա բովանդակային ու դինամիկ քննարկման միջև, որը վերաժվում է ուսուցչի գործունեության և խոսակցության, մինչ աշակերտները լուռ մտած, նրան են լսում: Որպես կանոն՝ ամենահաջող քննարկումները նրանք են, որոնք ուղղորդվում են աշակերտի հետաքրքրությամբ, որոնց ընթացքում ուսուցիչը խաղում է միջնորդի դեր:

<sup>10</sup> Գիտամեթոդական հանդես՝ «Նախաշավիղ» (2001/2002):

Գիլյոնը (1988թ.) մատնանշել է չորս «խթաններ» կամ միջոցներ, որ պետք է օգտագործի ուսուցիչը՝ քննարկում անցկացնելու և այն աշակերտակենտրոն դարձնելու նպատակով:

1. *Դիրքորոշումներ*: Մրանք պակաս ուղղորդիչ բնույթ ունեն, քան հարցերը, բայց քաջալերում են ավելի ազատ արձագանքներ տալ: Դուք կարող եք ասել. «Ուրեմն, ինչպես ես եմ հասկանում, Դուք ասում եք ...»: «Դա ինձ ինչ-որ բան է հիշեցնում..., որ ասվեց ավելի վաղ»: «Մի բույե, Դուք ասում եք ... , բայց Արամ հենց նոր ասաց... »:

2. *Հարցեր*: Աշակերտներն ավելի մեծ ոգևորությամբ կքննարկեն իրենց, այլ ոչ թե ուսուցչի առաջադրած հարցերը:

3. *Ազդանշաններ*: Հարցական արտահայտությունը կարող է բացատրության կարիք առաջացնել: Օրինակ՝ երկու ձեռքերը պարզելը նշանակում է երկու դիրքորոշումներից ընտրել մեկը, գլուխը թեքելը՝ ասածին կասկածանքով մոտենալ և այլն:

4. *Լռություն*: Հարցից հետո 3-5 վայրկյան սպասեք, որը հզոր խթան է ճիշտ պատասխանի համար:

*Գ Ո Ւ Ս (Գիտեն՝ Ուզում եմ սովորել՝ Սովորել եմ)*.<sup>11</sup> Մա երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է, որը կարող է դառնալ աշակերտների ուղեցույցը կարողալու ընթացքում: Կարելի է գծել մեծ թղթի վրա կամ գրատախտակին: Թեմայի վերնագիրը գրեք աղյուսակի վերևում և հարցրեք, թե ինչ գիտեն նշված թեմայի մասին, ասվածը գրի առեք աղյուսակի առաջին՝ «Գ - Ի՞նչ գիտենք արդեն» սյունակի մեջ: Աշակերտներին հարցրեք, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն և գրեք աղյուսակի «Ու - Ի՞նչ ենք ուզում իմանալ» սյունակի մեջ: Օգնեք աշակերտներին դասակարգել իրենց գիտելիքներն ու հարցերը և մի առանձին ցուցակ կազմեք: Կարողալ սատուությունը և գտնել այն տեղեկությունները, որոնք պատասխանում են նախնական հարցերին: Երբ աշակերտները վերջացնեն կարդալը, նրանց ուշադրությունը հրավիրեք երրորդ սյունակի վրա՝ «Ս - Ի՞նչ ենք սովորել»: Առաջարկեք թվարկել թեմային վերաբերող մոր տեղեկությունները, որոնք գտել են կարդալիս և դրանք գրի առեք երրորդ սյունակում:

## МЕТОДЫ ИНТЕРАКТИВНОГО ОБУЧЕНИЯ

\_\_\_ Резюме \_\_\_

\_\_\_ С. Хачатрян \_\_\_

Работа преследует цель-содействовать повышению качества обучения, повышению активности учащихся, формированию культуры межличностных отношений, более интересному и активному течению учебного процесса. Учащиеся, в этом случае, из пассивных слушателей превращаются в активных участников процесса получения знаний, проводящих собственные исследования и изыскания. Обсуждается целый ряд интерактивных методов обучения, преимущества которых налицо; учащиеся в процессе обучения преодолевают барьер зависимости от учителя и приобретают самостоятельность; учащиеся могут оценивать собственное обучение; формируются самостоятельные и уверенные в себе личности и.т. д..

<sup>11</sup> *Դոկտոր Մարի Վեսթրոուք – Թախունց, Տարրական դասարանների ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, ԱՅԲԵԶՍ, Վաշինգտոն, 1999:*